ՎԵՐԱԴԱՐՁՐԵՔ ՄԵՐ ՈՐԴԻՆԵՐԻՆ

Բաց նամակ ՀՀ եւ ԼՂՀ նախագահներին, Ն.Ս.Օ.Տ.Տ.Գարեգին Բ-րդին, ՀՀ, ԼՂՀ վարչապետերին, պաշտպանության, ԱԱ եւ ՆԳ նախարարներին

Արցախը գտնվում էր ծանր կացության մեջ: Մեր զավակները ոտքի կանգնեցին, փրկության ճեռք մեկնեցին Արցախի ժողովրդին՝ ազատագրելով մեր հողերը: Մեկնեց եւ իմ որդին: Որդիս՝ Ցեելիքսը, ընդգրկվեց «Արաբո» ջոկատում: Մարտակերտի Հասանդայա գյուղի ազատագրման մարտերի ժամանակ ջոկատի 78 մարտիկներ 1992 թ. հունիսի 29-ին շրջափակման մեջ ընկան: Նրանք այսօր համարվում են անհայտ կորածներ: Լուրն իմանալուն պես մենք բազմիցս դիմեցինք մեր ղեկավարներին: Եվ այդպես տարիներ շարունակ, արդեն ճիշտ 10 տարի, եւ հույսներս չենք կորցնում, որ նրանք ողջ են:

Սեպտեմբերի 21-ին մեր ժողովուրդը նշելու է Հայաստանի Անկախության 11-րդ տարելիցը: Մեզ՝ ծնողներիս համար մի նոր հույս է բացվում, եւ այս հույսի ազդեցությամբ խնդրում ենք ձեզ. ձեր խղճով, ձեր հավատքով, ձեր աջակցությամբ տուն վերադարձրեք «Արաբո» ջոկատի 78 ազատամարտիկներին, նրանց, ովքեր ողջ են... Ստված օգնական մեր հայրենիքին, մեր որդիներին, մեր ժողովրդին:

ՄԱՔՍԻՄ ԳԱԼՍՏՅԱՆ
Անհայտ կորած ազատամարտիկ Ցեելիքս Գալստյանի հայր